ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2025 թվականի N 390-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 2191 հոդվածի երկրորդ պարբերության, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի կողմից ստացված զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հարուցել վարչական վարույթ՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Նարեկացի փողոցում Սուրեն Ավագյանի կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու փաստի վերաբերյալ:

2. Վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2025 թվականի հուլիսի 11-ին, ժամը՝ 10:00-ին, Եղեգնաձորի համայնքապետարանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. հուլիսի 08
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2025 թվականի N 391-Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ և 50-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1730-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետը պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նշանակության 0 . 03523 հա մակերեսով հողը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն, այդ թվում՝ 0.02902 հա մակերսով բնակելի կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0006-0073-ից) և 0.00620 հա մակերսով այլ հող (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0006-0041-ից):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակավայրերի նշանակության 0.00620 հա մակերսով այլ հողի գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակելի կառուցապատման:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, ք. Եղեգնաձոր, Գ. Լևոնյան փողոց, 1-ին նրբանցք, 8 հողամաս:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 08
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 392-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը և համասեփականատեր Հովիկ Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հովիկ Արտաշեսի Հովհաննիսյանին,Լալա Վարդգեսի Համբարձումյանին,Լիլիթ Հովիկի Հովհաննիսյանին,Հասմիկ Հովիկի Հովհաննիսյանին,Տաթևիկ Հովիկի Հովհաննիսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 1022894) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գլաձոր, 17-րդ փողոց, 35 բնակելի տուն :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2025 թ. հուլիսի 09
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 393-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 119-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը և սեփականատեր Արման Այվազյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արման Սամվելի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող Եղեգնաձոր համայնք, ք. Եղեգնաձոր,Ս.Արսենյան փողոց, 9/49 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08082022-10-0006), ք.Եղեգնաձոր, Արսենյան փողոց, 9/5 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 07052021-10-0004), Ս.Արսենյան փողոց, 9/50 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 04012024-10-0034) և Ս.Արսենյան փողոց, 9/14 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 23052025-10-0006) հասցեներում գրանցված անշարժ գույքերը միավորել տրամադրելով հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, քաղաք Եղեգնաձոր, Ս. Արսենյան փողոց, 9/5 ավտոտնակ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2025 թ. հուլիսի 09
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հուլիսի 2025 թվականի N 394-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1730-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացի Արսեն Սաֆարյանի 2025 թվականի հուլիսի 9-ի դիմումը (մուտքի թիվ՝ 652դ), այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Միկոյան փողոց, 3 շենք 16 հասցեում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Միկոյան փողոց, 3 շենք, 16 հասցեում գտնվող, Արսեն Վոլոդյայի Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 0098206) ինքնակամ կառուցված՝ ըստ չափագրման տվյալների 19.36 քմ արտաքին մակերեսով և 14.33 քմ ներքին մակերեսով շինությունը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023PKKAQL) ճանաչել օրինական:

2. Առաջարկել կառույցն իրականացրած Արսեն Վոլոդյայի Սաֆարյանին (ծնված՝ 20.03.1964թ.) շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 1 քմ շինության համար 1969 (մեկ հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ, ընդամենը 38120 (երեսունութ հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ՝

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3. Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 09
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2025 թվականի N 395-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի 2025-2026 թվականների համայնքային սոցիալական ծրագրի IX գլխի պահանջները, Եղեգնաձոր համայնքի ավագանու «Դավիթ Հարությունյան» կուսակցությունների դաշինք խմբակցության ղեկավարի 2025 թվականի հուլիսի 9-ի, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավարի 2025 թվականի հուլիսի 3-ի, «Ապրելու երկիր» խմբակցության ղեկավարի 2025 թվականի հուլիսի 11-ի և Հայաստանի Հանրապետության միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալի 2025 թվականի հուլիսի 8-ի N 03/ԱԱ/38441-2025 գրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքում ստեղծել սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական ծառայություններ (հատուցում) տրամադրելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնաժողովին՝ գործունեությունը ծավալել համաձայն Եղեգնաձոր համայնքի 2025-2026 թվականների համայնքային սոցիալական ծրագրի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 11
ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ղեկավարի
2025 թվականի հուլիսի 11-ի
թիվ 395-Ա որոշման

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԸ

ՀՀ	Ազգանուն, անուն	Պաշտոնը (զբաղմունք)	Կարգավիճակը հանձնաժողովում
1	Վարդանյան Հրաչյա	Եղեգնաձոր համայնքի ղեկավարի տեղակալ	Հանձնաժողովի նախագահ
2	Խաչատրյան Գառնիկ	Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար	Հանձնաժողովի նախագահի տեղակալ
3	Պողոսյան Քրիստինե	Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ	Հանձնաժողովի քարտուար
4	Հովհաննիսյան Նելլտար	Եղեգնաձոր համայնքի ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
5	Ներսիսյան Մուշեղ	Եղեգնաձոր համայնքի ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
6	Սիմոնյան Լուսինե	Միասնական սոցիալական ծառայության Եղեգնաձորի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի ավագ սոցիալական աշխատող	Հանձնաժողովի անդամ
7	Կարապետյան Արսեն	Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի անդամ
8	Ստեփանյան Նաիրա	Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի անդամ
9	Սայադյան Մարիամ	Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի արաջատար մասնագետ	Հանձնաժողովի անդամ